Հասցե՝ գյուղ Փոքր Մանթաշ
Էլ. հասցե՝ p.mantashnarek91@mail.ru

«Մաքս Օիլ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան Էրեբունի 12/4
Էլ. Փոստ՝ maxoilgyumri@gmail.com

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը երկկողմանի լուծելու մասին

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ Շիրակի մարզի «Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և ««Մաքս Օիլ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 28.10.2024թ. կնքված « **ՇՄՓՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-24/2**» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ միակողմանի լուծելու վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի «Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի որոշումը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը (տվյալ դեպքում՝ «Մաքմ Օիլ» ՍՊԸ-ն) պարտավորվում է ՀՀ Շիրակի մարզի « Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով դիզելային վառելիքի (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել կնքված Պայմնագրի ուժի մեջ մտնելուց մինչև դեկտեմբերի 25-ը:

ՀՀ Շիրակի մարզի «Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի առողջապահության նախարարի գրության պատճառով տեղի է ունեցել ֆորս-մաժորային իրավիճակ:

ՀՀ ՇՄ « Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում ջեռուցումը անհրաժեշտ է կազմակերպել առաջնորդվելով ՀՀ առողջապահության նախարարի 2017թ մարտի 28-ի N 12-Ն հրամանի դրույթամբ՝ մասնավորապես 46-րդ կետի համաձայն «հաստատության վառարանային ջեռուցումը չի թույլատրվում»:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը չի կարող իրականացնել պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարումը, ուստի ՀՀ Շիրակի մարզի « Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, երկկողմանի լուծարվում է 28.10.2024թ. Ընկերության հետ կնքված «**ՇՄՓՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-24/2**»ծածկագրերով ապրանքների մատակարարման պայմանագիրը՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամբ Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

ՀՀ Շիրակի մարզի «Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

Վարչատնտեսական մասի համակարգող ________ Է. Մանասյան/